ՄՈՒՀԹԱՍԻԲՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ XI—XIII դդ.

Հ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի քաղաքների պատմության համակողմանի լուսաբանման համար քաղաքային վարչության ու պաշտոնեության ուսումնասիրությունը խիստ կարևոր նշանակություն ունի։ Քաղաքային ինստիտուտների հետազոտությունը այն գլխավոր ուղիներից մեկն է, որ հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել քաղաքների ներքին կազմակերպության, կառավարման եղանակների, ներքաղաքային փոխհարաբերությունների, քաղաքների ներքին կյանքի մասին ընդհանրապես։

Հայկական սկզբնաղբյուրները, հատկապես պատմական երկերը, բավականաչափ նյութ տրամադրելով հետազոտողներին քաղաքների պատմության ուսումնասիրության համար, այսուհանդերձ կցկտուր տեղեկություններ են պարունակում քաղաքների ներքին կյանքի վերաբերյալ։ Այս բացը որոշ չափով լրացնում են այլաբնույթ սկզբնաղբյուրները (վիմագիր արձանագրություններ, ձեռագրերի հիշատակարաններ, իրավունքի հուշարձաններ), որոնցում վկայված տերմինները օգնում են լույս սփռել ներքաղաքային կյանքի սակավ ուսումնասիրված կողմերի վրա։

Ավատատիրության շրջանի հայկական քաղաքների ներքին պատմությանը առնչվող խնդիրների հետազոտությունը զգալիորեն դյուրանում է արևելյան, մասնավորապես Իրանի, Մերձավոր Արևելքի, Միջին Ասիայի քաղաքների պատմության բավականաչափ լավ ուսումնասիրված լինելու շնորհիվ։ Ինչպես երևում է սկզբնաղբյուրների վկայություններից, արևելյան քաղաքների համար բնութագրական բազմաթիվ իրողություններ իրենց զուգահեռներն են ունեցել հայ իրականության մեջ, որոնք և մեր մատենագիրները հաճախ հիշատակում են արևելյանին հար ու նման տերմիններով։ Ուղղակի վկայությունների խիստ պակասի պայմաններում այդ տերմինների քննությունը, որոնց իմաստը, իրական բովանդակությունն ու զարգացում-փոփոխությունները լիակատար են արտացոլված արևելյան, գլխավորապես արաբական ու պարսկական աղբյուրներում, խիստ բարձրացնում է հայկական հատուկենտ ու դժվարընկալելի վկայությունների արժեքը։ Հայ-արևելյան տերմինային համընկնումները հավաստելուց հետո ոչ միայն կարելի է դառնում հետազոտության ոլորտ ներգրավել արաբական ու պարսկական նոր նյութեր, այլև, հնարավորության դեպքում, որոշել քննվող արևելյան տերմինների հայկական համարժեքները և այդպիսով ընդարձակել նաև մեր սկզբնաղբյուրների ընձեռած տվյալների օգտագործելիության սահմանները։

Մահմեդական քաղաքներում, ընդհանրապես մահմեդական աշխարհում, «մուհթասիբ» էր անվանվում այն պաշտոնյան, որն իրականացնում էր «հիսբա»-ն՝ շարիաթի խախտումների կանխումը, մեղավորների պատժումը և դաստիարակությունը՝ բոլոր մահմեդականների համար պարտադիր կենցաղավարության և բարոյականության ոգով։ Մուհթասիբի իրավասությունների թվին

---

[1] *Տե՛ս* R. Levy. The Social Structure of Islam. Cambridge, 1962, p. 334—338; Encyclopedia de l'Islam. t. III, Leyde—Paris, 1971, p. 504; А. М. Беленицкий, И. Б. Бентович, О. Г. Большаков. Средневековый город Средней Азии. Л., 1973 с. 301—304; *«Մուհթասիբ» բառը երբեմն բխեցվում է արաբ.* «hsb» *(հաշվել) արմատից. տե՛ս Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. Գ, Երևան, 1977, էջ 354։* П. И. Пет-

հին պատկանում փողոցների մաքրության և բարեկարգության վերահսկողությունը, ոգելից խմիչքների օգտագործման կանխումը, մոլեխաղերի արգելումը։ Մուհթասիբի գործունեության հիմնական ասպարեզը, այնուամենայնիվ, շուկան էր, որտեղ ամենից ավելի հաճախ էր խախտվում օրինականությունը։ Այստեղ նա հսկում էր չափերին ու կշիռներին, առևտրի կազմակերպմանը, թույլ չէր տալիս, որ անփորձ մարդիկ զոհ գառնան առևտրականների շրջանում տեղ գտած խաղդախությանը։ Մուհթասիբի գործունեության կարևոր կողմերից էր արհեստների և արհեստագործության նկատմամբ վերահսկողությունը, որպեսզի կանխվեր արգելված ապրանքների արտադրությունը, արհեստավորները չխախտեին ապրանքների արտադրության տեխնոլոգիան և չարտադրեին վատորակ ապրանքներ[2]։ Մուհթասիբն էր իրականացնում նաև այլադավանների նկատմամբ մահմեդականների ունեցած սրտոնությունների պահպանումը։ Նա չպետք է թույլ տար, որպեսզի քրիստոնյաներն ու հրեաները մահմեդականներից ավելի բարձր տներ կառուցեին, հավաքվեին քաղաքների հրապարակներում ու գլխավոր փողոցներում, հետևեր, որ նրանք կրեին միայն իրենց համար նախատեսված հագուստ և այլն[3]։

Հայաստանի քաղաքներում այս պաշտոնյայի գոյությունը հավաստող ամենահին աղբյուրը Ահարոն Մագիստրոսի 1055/56 թ. հայտնի արձանագրությունն է, ուր, ի թիվս քաղաքի բյուզանդական կառավարչի այլ ձեռնարկումների, կարդում ենք. «[այ]լ եւ ի խնդրս իշխանաւորացս խափանեցի եւ զգիւտ երկուց լտերց, զոր տայր մութասիբն»[4]։ Հետազոտողները վաղուց են նկատել, որ այստեղ հիշատակված «մութասիբ»-ն Անիում, հավանաբար, հանդես էր գալիս իբրև շուկայի վերակացու և հսկում էր կշիռներին ու չափերին[5]։ Այսպիսով, միանգամայն ճիշտ է դիտվել մուհթասիբի գործունեության

р о в. Бухарский мухтасиб в начале XX века.—Проблемы востоковедения, 1959, № 1, с. 139; ն. ջ ո ք ի ա. XVIII սաղմոնոս թուրքերեն դասագիրք ոճրոն ցոնոն ՇԵՍԱՆՅԵՆ, ԹՍԿ ՇՐՈՄԵՆՆ, Թ. 91, ԹԲ., 1960, ՁՁ. 180—182.

[2] *Մուհթասիբը երբեմն վերահսկում էր անգամ դպրոցների գործունեությունը, տե՛ս* M. C a n a r d. L'expansion arabo-islamique et ses reprecussions (Variorum reprints, XVI), London, 1974, p. 333։

[3] *Մուհթասիբի պաշտոնի առանձնահատկությունների մասին տե՛ս նաև* The Cambridge History of Iran. Vol. 5, 1968, p. 278—279; The Cambridge History of Islam. Vol. 2, 1970, p. 529; В. В. Б а р т о л ь д. Сочинения. Т. 1, М., 1963, с. 290—291; А. М е ц. Мусульманский Ренессанс. М., 1966, с. 326; Спасет-намэ. Книга о правлении везира XI столетия Низам ал-Мулька, перевод проф. Б. Н. Заходера. М.—Л., 1947, с. 47, 320, прим. 88; А. А. С е м е н о в. Бухарский трактат о чинах и званиях и обязанностях носителей их в средневековой Бухаре.—Советское востоковедение, V, М.—Л., 1948, с. 140; К. В. Т р е в е р, А. Ю. Я к у б о в с к и й, М. Э. В о р о н е ц. История народов Узбекистана. Т. I, Ташкент, 1950, с. 248; История таджикского народа. Т. II, кн. I, М., 1964, с. 147; И. П. П е т р у ш е в с к и й. Ислам в Иране в VII—XV веках. Л., 1966, с. 196; *Ա. Տեր-Ղևոնդյան. Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում. Երևան, 1966, էջ 251—252։*

[4] *Դիվան հայ վիմագրության, պր. I, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի. Երևան, 1966, էջ 38։*

[5] *Տե՛ս* В. Н. Б е н е ш е в и ч. Три анийские надписи XI века из эпохи византийского владычества. Петербург, 1921, с. 4, прим. 3; Я. А. М а н а н д я н. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Ереван, 1954, с. 232; *Հ. Մանանդյան. Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության (II).—Երկեր. հ. Դ, Երևան, 1981, էջ 157 (առաջին անգամ տպագրվել է 1938 թ.)։ Նույնի՝ Քաղաքները Հայաստանում 10—11-րդ դարերում.—Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Բ, Բ մասի նյութեր. Երևան, 1960, էջ 368։ Հ. Բարթիկյան. Ահարոն Մագիստրոսի արձանագրության (1055—1056) մեջ հիշատակված հարկերի մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 4, էջ 171։ Լ. Բաբայան. Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական*

հիմնական բնագավառը. սակայն, ինչպես նշվեց, մուհթասիբությունը, ի տարբերություն այլ քաղաքային ինստիտուտների, կրում էր որոշակի դավանական երանգ, քրիստոնյաների և մյուս այլակրոն տարրերի ստորադրվածության ընդգծումն այդ պաշտոնյայի էական պարտականություններից էր։ Ինչպե՞ս բացատրել նմանօրինակ պաշտոնի գոյությունը հայ Բագրատունիների երբեմնի մայրաքաղաքում, որտեղ մահմեդականների քաղաքական իշխանություն երբեկից մինչ այդ չէր հաստատվել, իսկ քրիստոնյաները մշտապես կազմել են բնակչության բացարձակ մեծամասնությունը։

Հայտնի է, որ արաբները նվաճած երկրներից և մշտական ախոյան Բյուզանդիայից փոխ առան քաղաքների կառուցապատման և ներքին կազմակերպության հետ կապված բազմազան ինստիտուտներ։ Նորագույն գրականության մեջ մասնավորապես նշվում է նաև շուկայի վերակացուի՝ բյուզանդական «ագարանոմոս»-ի փոխառումը արաբների կողմից «ամիլ ալ-սուք», «սահիբ ալ-սուք» ձևերով, որից էլ, այդ պաշտոնյայի իրավասության ոլորտի ընդլայնմամբ, վաղ Աբբասյանների օրոք ձևավորվեց մուհթասիբության ինստիտուտը[6]։ Ավելացնենք, որ այս դրույթը հաստատող չափազանց ուշագրավ վկայություն է պահպանվել սելջուկյան սուլթան Մելիք-շահի (1072—1092) վեզիր Նիզամ ալ-Մուլքի «Սիասեթ-նամե» երկում։ Հեղինակի կարծիքով, եթե ամիլը (հարկահավաք) փորձված է ու հմուտ, բայց ոչ մահմեդական, հարկավոր է փոխարինել նրան մահմեդականով, «եթե այդ մարդու պաշտպանները անգամ ասեն, որ նրա նման դպիր ու մուհթասիբ աշխարհում չկա»[7]։ Այսպիսով, դեռևս XI դարում բացառված չէր մուհթասիբի պաշտոնի վարումը ոչ մահմեդականի կողմից, այդ ինստիտուտի մահմեդականացումը վերջնականապես չէր ավարտվել։ Ուստի օտար անվանումը չպետք է այն տպավորությունը ստեղծի, թե գործ ունենք հայկական միջավայրին խորթ երևույթի հետ։ Քաղաքային կյանքի դարավոր ավանդույթներ ունեցող Հայաստանում շուկայական առևտրի կազմակերպման և վերահսկողության հարցերը կարգավորող պաշտոնությունը պետք է ձևավորված լիներ շատ վաղուց, մուհթասիբության ինստիտուտը Անիում կյանքի կոչված կլիներ տեղական պայմանների թելադրմամբ և կլիներ ըստ էության հայկական քաղաքային ինստիտուտ։

Չափերի ու կշիռների վերահսկողությունը իրականացնող պաշտոնեությունը, իբրև կանոն, առաջիններից մեկն էր ստեղծվում քաղաքներում։ Արևմտյան Եվրոպայի երկրներում նորաստեղծ քաղաքներում այդ կարևոր հոգսը ընկնում էր քաղաքային համայնքի վրա, սակայն չափերի ու կշիռների մենաշնորհը սեփականում էր քաղաքի սենյորը, քանի որ ապրանքների վաճառքի ժամանակ չափ ու կշիռ օգտագործելիս հատուկ մուծումներ էին արվում հօգուտ սենյորի՝ մեծ եկամուտ բերելով նրան[8]։

Անիում այս պրոցեսը շատ արագ պետք է կատարված լիներ, քանի որ հենց սկզբից քաղաքային կյանքի կազմակերպման մեջ վճռորոշ դեր էին խա-

---

պատմությունը XIII—XIV դարերում. Երևան, 1964, էջ 498—499։ Ա. Տեր-Ղևոնդյան. նշվ. աշխ., էջ 254։

[6] Տե՛ս The Cambridge History of Islam. Vol. 2, p. 496, 549, 557։ Մ. Կանաթի կարծիքով, բյուզանդական խոշոր քաղաքներում մուհթասիբի դերը կատարում էր եպարքոսը (տե՛ս Византийская книга Эпарха. Вступительная статья, перевод, комментарии М. Я. Сюзюмова, М., 1962, с. 105)։ Սակայն մուհթասիբի և եպարքոսի իրավունքների և պարտականությունների համեմատությունից (վերջինիս պաշտոնի մասին տե՛ս Մ. Սյուզյումովի նշված թարգմանության ծանոթագրությունները, էջ 101—106) ակներև է, որ եպարքոսի լիազորությունները ազդեցությունը ավելի բազմազան ու մեծ են եղել, ուստի մուհթասիբ—եպարքոս համապատասխանությունը, թվում է, հեռու է իրական լինելուց։

[7] Сиасет-намэ, с. 171.

[8] Տե՛ս В. В. Стоклицкая-Терешкович. Основные проблемы истории средневекового города X—XV веков. М., 1960, с. 20, 61—62.

դում քաղաքի ծաղկմանն ու բարգավաճմանը նախանձախնդիր Բագրատունի արքաները։

Մուհթասիբի հայկական համարժեքի բացահայտումից և այդ պաշտոնյայի իրավասությունների շրջանակի պարզաբանումից ևս (որի մասին խոսք կլինի ստորև) երևում է, որ մուհթասիբի գործունեության նախնական նպատակը եղել է առևտրի և արհեստների կազմակերպումը. հասարակական բարքերի ու կենցաղի նկատմամբ վերահսկողությունը միայն հետագայում է ներառվել նրա պարտականությունների ոլորտի մեջ։ XI դարի 50-ական թթ. Անիում հայկական քաղաքային պաշտոնյային օտար անվանումով հիշատակելու փաստը պետք է բացատրել ինչպես արևելյան քաղաքների հետ աշխույժ կապերով, այնպես էլ այդ ինստիտուտի առկայությամբ հայկական այն քաղաքներում, որոնք արաբական տիրապետության թոթափումից հետո էլ շարունակելով մնալ արաբական ամիրայությունների տարածքում՝ ավելի մեծ չափով էին ենթակա քաղաքային կազմակերպության արևելյան եղանակների ազդեցությանը։ Բացառված չէ նաև, որ օտար անվանմանը զուգահեռ գործածվում էր և քննվող ինստիտուտի անվանման հայկական տարբերակը։

Թեև պակասում են անհրաժեշտ վկայությունները, այնուամենայնիվ, հատկապես Անիում հիշատակվելու փաստը հիմք է տալիս ենթադրելու մուհթասիբի գոյությունը նաև Դվինում, որը, լինելով արաբական տիրապետության գլխավոր հենարանը Հայաստանում, ավելի էր ենթակա օտար ազդեցության։ Այս հիմամբ կարելի է հնարավոր համարել մուհթասիբի գոյությունը արաբական ու սելջուկյան ժամանակաշրջանների մահմեդական ամիրայությունների մյուս խոշոր հայկական քաղաքներում, ինչպես, օրինակ, Խլաթում, Նախիջևանում, Երզնկայում, Կարինում։ Այդ և հայկական թագավորություններին պատկանող քաղաքների (Անի, Կարս) մուհթասիբների գործունեության հիմնական տարբերությունը պետք է լիներ քրիստոնյաների նկատմամբ վերաբերմունքի հակադրությունը։ Կասկած չի կարող լինել, որ մինչև 1064 թ. Անիի մուհթասիբի լիազորություններից բոլորովին դուրս էր մնում քրիստոնյաների նկատմամբ դավանական խտրականության իրականացումը։ Դրությունը Անիում հիմնովին պետք է փոխվեր XI դարի երկրորդ կեսին և XII դարի սկզբին, երբ Շեդդադյանների տիրապետության հաստատումով այդ պաշտոնը առավել մեծ կարևորություն ու կշիռ ձեռք կբերեր, հատկապես եթե նկատի ունենանք դավանական հալածանքների մթնոլորտը, որ հաստատվեց Անիում Աբուլասվար Շեդդադյանի (1110—1124) իշխանության գլուխ անցնելուց հետո[9]։ Մահմեդականների տիրապետության պայմաններում Անիի մուհթասիբը դժվար թե այլևս որևէ չափով տարբերվեր արևելյան քաղաքների նույնանուն պաշտոնյաներից։ Մուհթասիբության ինստիտուտի մեջ էական փոփոխություններ կկատարվեին միայն XII դարի վերջին և XIII դարի սկզբին, երբ աղատագրվեցին Անին, Դվինը և Կարսը։ Մուհթասիբը նորից պետք է հրաժեշտ տար իր պարտականությունների այն մասին, որը կապված էր մահմեդական կրոնի հետ և մնար սոսկ իբրև առևտուրը և արհեստագործությունը հսկող պաշտոնյա։

Ճիշտ նույնպիսի փոփոխություններ կրած կլիներ նաև Թբիլիսիի մուհթասիբի պաշտոնը Հարևան Վրաստանում։ Եթե ընդհուպ մինչև 1122 թ. (քանի դեռ գոյատևում էր Թբիլիսիի արաբական ամիրայությունը) մուհթասիբը առանձնապես չպետք է զանազանվեր մահմեդական երկրների իր գործընկերներից, ապա 1170 թ., երբ նա հիշատակվում է իբրև վրաց Գեորգի III թագավորին ենթակա պաշտոնյա[10], վաղուց արդեն չէր կարող կատարել մահմեդական կրոնի հետ կապված իր պարտականությունները։ Ի դեպ, վրաց հետազոտողներից

---

9 Տե՛ս Հավաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի. Վենետիկ, 1862, էջ 156։

10 Տե՛ս ქართული სამართლის ძეგლები, ტ. II, გამოსცა ი. დოლიძემ, თბ., 1965, გვ. 21, հմմտ. Ս. Ջօջոա. նշվ. աշխ., էջ 180-182։

Վ. Գաբաշվիլին[11] և Մ. Գաբաշվիլին[12], ընդգծելով մուհթասիբի սերտ կապը մահմեդական կրոնի հետ, թերահավատությամբ են ընդունում համապատասխան բուն վրացական պաշտոնեություն փնտրելու ուղղությամբ Շ. Մեսխիայի կատարած փորձը[13], սակայն մուհթասիբի պաշտոնի ծագման ու զարգացման վերոբերյալ պարզաբանումից ակներև է, որ տեղական վրացական ինստիտուտի գոյությունը, մինչև արևելյան տիպի պաշտոնեության տարածումը Վրաստանի քաղաքներում, սկզբունքորեն չպետք է բացառել։ Այլ հարց է, որ Շ. Մեսխիայի առաջարկած «մուհթասիբ-քալաքիս նացվալի» նույնացումը համոզիչ չէ, մանավանդ որ «նացվալի», «մեփիս նացվալի» (տեղական, փոխանորդ; թագավորի տեղակալ, փոխանորդ) վրացական ինստիտուտների համապատասխանությունը արևելյան «շահնա»-ին ցույց է տվել ինքը՝ Շ. Մեսխան[14]։

Պետք է նշել, որ մուհթասիբի ճակատագիրը որոշակիորեն տարբեր էր ղադիի (դատավորի) վիճակից, որի իրավազորությունը տարածվում էր միայն մահմեդական համայնքի անդամների վրա, և ղադին կարողացավ զգալի չափով պահպանել իր ազդեցությունը Հայաստանում ու Վրաստանում[15]։

Մոնղոլների արշավանքներից ու բուն Հայաստանում քաղաքային կյանքի անկումից հետո մուհթասիբության ինստիտուտի մասին հայկական աղբյուրների տեղեկությունները առավել սակավ են դառնում։ Ճիշտ է, Հ. Մանանդյանը[16] և Լ. Բաբայանը[17] ենթադրում են, որ մուհթասիբը «մուսայիպ» ձևով հիշատակվում է նաև մոնղոլական շրջանի Անիի անթվական արձանագրություններից մեկում, սակայն այդ արձանագրության ավելի ուշ լույս տեսած գիտական հրատարակությունում «մուսայիպի» փոխարեն ընթերցվում է «մուսլաջիութ» հարկանունը[18]։ Ավելի ուշ ժամանակաշրջանի վկայություններից առաջինում Մատթեոս Ջուղայեցին (XIV դարի վերջ—XV դարի սկիզբ) կշիռների ու չափերի վերահսկողությունը, մուհթասիբի պաշտոնի հաստատումը համարում է իշխանների առանձնաշնորհը[19], և այդ տեղեկությունը, թերևս, առավելապես վերաբերում է գյուղական վայրերին, քան քաղաքներին։ Հայկական հիշատակարաններից մեկում պահպանված երկրորդ վկայությունը վերաբերում է XVI դարի Սամցխեին[20]։

Հայկական միջավայրում մուհթասիբի պաշտոնի անվանմանը և գործունեության շրջանակներին անդրադառնում է Մխիթար Գոշը Դատաստանագրքի

---

11 Տե՛ս ვ. გაბაშვილი. თბილისის მმართველობა X-XI საუკუნეებში, თსუ შრომები, ტ. 108, თბ., 1964, გვ. 336—337:

12 Տե՛ս მ. გაბაშვილი. საქართველოს ქალაქები XI—XII საუკუნეებში, თბ., 1981, გვ. 87:

13 Տե՛ս Ш. А. Месхия. Города и городской строй феодальной Грузии XVII—XVIII вв. Тбилиси, 1959, с. 81, 276.

14 Տե՛ս შ. მესხია. საქალაქო კომუნა შუა საუკუნეების თბილისში, თბ., 1962, გვ. 92-94:.

15 Տե՛ս Ստեփաննոս Օրբելյան. Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 355. հմմտ. Գ. Սուքելյան. Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ. հ. 2, Երևան, 1964, էջ 84։ ვ. გაბაშვილი. նշվ. աշխ., էջ 340։ მ. გაბაშვილი նշվ. աշխ., էջ 85—86։ М. В. Габашвили. Мусульманские религиозные должности по грузинским источникам (IX—XIV вв.).—Бартольдовские чтения, 1982. Тезисы докладов и сообщений. М., 1982, с. 15—16.

16 Տե՛ս Հ. Մանանդյան. Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, էջ 157։

17 Տե՛ս Լ. Բաբայան. նշվ. աշխ., էջ 498։

18 Դիվան հայ վիմագրության, պր. 1, էջ 1։

19 Տե՛ս Ա. Հովհաննիսյան. Դրվագներ հայ աղատագրական մտքի պատմության. հ. Ա, Երևան, 1957, էջ 443 (մեջբերումը կատարված է Մաշտոցի անվ. Մատենադարանի № 1402 ձեռագրից, էջ 26ա)։

20 Տե՛ս Լ. Խաչիկյան. XIV—XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին.— «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 112։

մխ զլխում։ Այստեղ կարդում ենք. «Եւ վաճառք ըստ հրամանի թագաւորաց կարգեսցին ի քաղաքս կամ յիշխանաց՝ ըստ հրամանի թագաւորաց, եթէ ի քաղաքս, կամ յաւանս, կամ յայլ ինչ տեղիս ի գաւառս։ Եւ նախահոգութեամբ զչափս, եւ զկշիռս, եւ զոյգս նոքա դիցեն՝ տեսանելով զզաւրութիւնս վաճառին։ Կարգեսցին եւ կոփիչս միշտ որոնել եւ տեսանել, զի մի՛ ենգութիւն ինչ արասցեն։ Այլ խարդախիցն խրատ ըստ հրամանի իշխանացն լիցի։ Գողիցն ի չափս եւ ի կշիռս հատուցանել չորեքկին եւ յանդիմանութեամբ նշաւակել ի զարհուրումն այլոց»[21]։ Ինչպես երևում է Գոշի խոսքերից, կոփիչը շուկայում կատարում էր այն, ինչ մուհթասիբը և օրինաչափ է, որ Գոշին ըստ ամենայնի հետևող Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքի համապատասխան հատվածում առևտրին վերահսկող պաշտոնյաներին անվանում է «դուքերն և մուխթասպնին»[22]։ Դժվար չէ նկատել, որ Սմբատ Սպարապետը հայերեն պաշտոնանունը փոխարինել է եվրոպական (դուք) և արևելյան (մուխթասիպ) համապատասխանություններով։ Մուհթասիբ-կոփիչ նույնությունը լիովին հաստատում և հայ իրականության մեջ այդ պաշտոնյայի իրավասության ասպարեզի մասին լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեկ այլ գլուխը՝ «Յաղագս դատաստանաց ի ջրաղացս աղաւնաւորաց», որտեղ օրենսդիրը հետևյալն է սահմանում. «Եւ ջրաղացպանք փորձ լիցին արուեստի ամենայն կաղմածոյ, զի մի՛ զբազմատանջն ապականեսցեն զկերակուր աներկեղութեամբ։ Այնպիսի վնասողացն դատաստանաւ է ոչ վարձել, այլ զվնասն ևս տուժել։ Ապա թէ պատճառն ի գիճութենէ աղաւնին իցէ, անպարտք լիցին, իսկ ի ջուր զաղացեալն վճարիցեն։ Այլ զգողացեալն՝ չորեքկին, եւ ի կոփողացն յանդիմանութիւն լիցի նշաւակաց»[23]։ Այս հատվածի «կոփող»-ը, որ Դատաստանագրքի ուշ խմբագրություններում բացատրվում է իբրև «մուհթասիբպ», «մուխթասիպ»[24], անկասկած նույնն է արդեն հիշատակված «կոփիչ»-ի հետ։ Այդ տերմիններն էլ, որ զանազանվում են իրարից սոսկ նույնիմաստ վերջավորություններով (նույնական է նաև այդ պաշտոնյաների գործելակերպը՝ գողացածի փոխարեն բռնագանձել չորեքպատիկը և նշավակել մեղավորներին), ներկայացնում են մուհթասիբի հայկական անվանումը[25]։

Ակադ. Բ. Առաքելյանը իրավացիորեն ընդգծում է այն հանգամանքը, որ կոփիչները բացի շուկայից հսկում էին հասութաբեր ձեռնարկությունների աշխատանքը, կարգավորում էին արտադրող—սպառող հարաբերությունները[26]։

---

21 Մխիթար Գոշ. Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի. Երևան, 1975, էջ 148, հմմտ. էջ 410։

22 Տե՛ս Смбат Спарапет. Судебник. Составление текста, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна. Ереван, 1958, с. 126—127.

23 Մխիթար Գոշ. Գիրք դատաստանի, էջ 150։

24 Տե՛ս նույն տեղում, էջ 412. հմմտ. Մխիթար Գոշ. Դատաստանագիրք Հայոց, հրատ. Վ. Բաստամյանցի. Վաղարշապատ, 1880, էջ 439։ Կոփիչները իրենց պարտականությունները կատարելիս, անկասկած, հաճախ դիմում էին նաև ֆիզիկական ուժ գործադրելուն, որի մասին է վկայում հենց «կոփիչ, կոփող» անվանումը՝ «կոուփ—բռունցք, բռունցքով հարված» բառից. տե՛ս Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. Բ, Երևան, 1973, էջ 673։

25 Մուհթասիբ—կոփիչ նույնացումը առաջարկել է դեռևս Ս. Եղիազարյանը. տե՛ս С. А. Егиазаров. Исследования по истории учреждений в Закавказье. Часть II, Городские цехи. Казань, 1891, с. XL—XLI; Նույնի՝ Исследования по истории армянского права, публичного и частного. Вып. I, Государственный, общественный, хозяйственный и юридический строй Армении в X—XIII вв. по надписям г. Ани и Ширака. Киев, 1919, с. 24. Մուհթասիբ—կոփիչ համապատասխանությունը վերջերս նշեց նաև Թ. Հակոբյանը. տե՛ս Թ. Հակոբյան. Անիի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև 1045 թ.). Երևան, 1980, էջ 119—121։

26 Տե՛ս Բ. Առաքելյան. նշվ. աշխ., էջ 199։ Հեղինակը կոփիչ—մուհթասիբ նույնացումը չի կատարում և ենթադրում է, որ կոփիչները կարող էին լինել մուհթասիբին ենթակա պաշտոնյաներ (նույն տեղում, էջ 216—217)։ Բ. Առաքելյանը հայտնում է այն միտքը, որ շուկայա-

Արհեստավորների աշխատանքում տեղ գտած անօրինականություններին հատուկ անդրադառնում է Մխիթար Գոշը[27], ուստի օրինաչափ է, որ հայկական քաղաքների մուհթասիբները ևս հսկեին արհեստագործական արտադրության կետերի վրա՝ այդ տեղերում օրինականությունը պահպանելու նպատակով։ Այս, սակայն, չէր նշանակում, որ մուհթասիբը հանդես էր գալիս նաև իբրև ոստիկան կամ ոստիկանապետ, ինչպես հակված է կարծել հետազոտողների մի մասը[28]։ Հանրահայտ է, որ արևելյան քաղաքներում մուհթասիբի, ղադիի և ոստիկանապետի գործունեության ոլորտները որոշ դեպքերում համընկնում էին, սակայն երբեք չէին նույնանում։ Ոստիկանությունը, իբրև կանոն, ընդգրկված էր լինում այլ դիվանի (գերատեսչության) մեջ, և ոստիկաններին (շուրտաներին) գլխավորում էր սահիբ աշ-շուրատը (շուրտաների ավագը)[29]։

Զգալի բարդություն է հարուցում այն հարցի պարզաբանումը, թե մուհթասիբը ի՞նքն էր հավաքում առևտրականներից ու արհեստավորներից գանձվող հարկերը, հանդես էր գալիս նաև իբրև հարկահավաք, ինչպես հաճախ ենթադրվում է[30], թե ոչ։ Անիի 1055/56 թ. արձանագրությունը վերջնական եզրակացության հանգելու համար տվյալներ չի ընձեռում։ Բնագրից այն տպավորությունն է ստեղծվում, թե մուհթասիբը ինքն էր պարտավոր Անիի բյուզանդական կատապանին վճարել երկու լիտր, այն է՝ 144 ոսկեդրամ։ Սակայն այդ պատկառելի գումարը (հիշենք, որ բոլոր քաղաքացիները միասին «թաստակ» և «պախտ տանց» հարկերի դիմաց վճարում էին ութ լիտր, 576 ոսկեդրամ)[31] մուհթասիբը, թերևս, պետք է հավաքեր առևտրականներից։ Նման ենթադրության օգտին է խոսում, թվում է, այն փաստը, որ երկու լիտրի «խափանում»-ով շահագրգռված են եղել Անիի «իշխանաւոր»-ները, որոնց խնդրանքով է Ահարոն Մագիստրոսը վերացրել վերոհիշյալ գումարի վճարումը։ Անիի արձանագրությունը հստակորեն ցույց է տալիս, որ «գիտ» հարկը տեղական պարտավորություն էր և այն վերացնելու համար կարիք չկար կայսերական

կան պաշտոնյան կոչվում էր շահապետ, սակայն այդ կապակցությամբ վկայակոչված «Միմոս Ձիս և վաճառական» առակում (տե՛ս Ղ. Մ ա ռ. Ժողովածոյք առակաց Վարդանայ. մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 49—50) սոսկ պատմվում է խաբված վաճառականին ծաղրելիս «շահապետ քաղաքին»-ի մասնակցելու մասին ու հիմք չի տալիս շահապետի պաշտոնը կապելու շուկայական առևտրի վերահսկողության հետ։ Հ. Աճառյանը մեջբերված արտահայտությունը թարգմանում է «քաղաքապետ» (Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. Գ, էջ 483)։

27 Տե՛ս Մ խ ի թ ա ր Գ ո շ. Գիրք դատաստանի, էջ 148—149, հմմտ. էջ 411։

28 Տե՛ս Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն նոր բառեր հայ մատենագրության մեջ. հ. Ա, Վենետիկ, 1913, էջ 62—63։ Նույնի՝ Հայերեն արմատական բառարան. հ. Գ, էջ 354։ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, էջ 157։ Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 171։ Լ. Բ ա ր ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 498. հմմտ. Բ. Ա ռ ա ք ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 155։ Թ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 172։ Գրականության մեջ հանդիպում է նաև մուհթասիբի ու շահնայի պաշտոնների մերձեցման անհամոզիչ փորձ առանց համապատասխան աղբյուրների վկայակոչության. տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. III, Երևան, 1976, էջ 467։

29 Տե՛ս ծան. 1—3-ում հղված գրականությունը։ «Շորտայ», «շուրտայաց աւագ» տերմինները վկայված են հայկական աղբյուրներում (տե՛ս Ս. Ա վ ա ղ յ ա ն. Վիմական արձանագրությունների բառաքննություն. Երևան, 1978, էջ 255—259), սակայն հիշատակությունները չեն վերաբերում Հայաստանի քաղաքներին։

30 Տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, էջ 157։ Ա. Տ ե ր-Ղ ա ֆ ա դ ա ն. նշվ. աշխ., էջ 252։ С. Т. Еремян. Армения в IX—первой четверти XIII в.—Очерки истории СССР. Период феодализма IX—XV вв., ч. I, М., 1953, с. 607; Լ. Բարայանը մուհթասիբին հարկահավաք է համարում միայն մոնղոլական շրջանում (տե՛ս Լ. Բ ա ր ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 498)։ Թ. Հակոբյանը հարկերի ու տուրքերի հավաքման պարտականություն է վերագրում կոփիչներին (տե՛ս Թ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 155)։

31 Լիտրի դրամական միավոր լինելու մասին տե՛ս Հ. Բ ա ր թ ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 171—172։

հրովարտակի, սակայն պատասխան չի տալիս այն հարցին թե ո՞վ էր հավաքում այդ հարկը։ Արձանագրության լուսաբանությունը բարդացնում է ինչպես այն պարագան, որ բյուզանդական պաշտոնեության համար բնորոշ էր տարբնույթ պարտականությունները զուգակցելու ավանդույթը[32], այնպես էլ հարկերի կապալառության՝ Բյուզանդիայում տարածում գտած պրակտիկան[33]։ Ուստի դժվար է պնդել, թե Անիում բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանում (1045—1064 թթ.) հարկահավաքությունը մուհթասիբի անբակտելի իրավունքն ու պարտականությունն էր։

Պետք է ենթադրել, որ մուհթասիբի՝ հարկերի հետ կապված գործունեությունը տեսական բնույթ էր կրում, այլապես Անիի «իշխանաւոր»-ները հատուկ խնդրանքով չէին դիմի կատապանին, թեև առավել սպասելի էր, իհարկե, որ հատուկ հարկ հավաքվեր մուհթասիբի կատարած աշխատանքի դիմաց, մանավանդ որ այդպիսի հարկերը սովորական էին Հայաստանում[34]։ Հ. Մանանդյանը նույնիսկ ենթադրում է, որ «դիւտ» հարկը ստանում էին՝ մուհթասիբը և նրանից վերև կանգնած իշխանավորները[35], իսկ Բ. Առաքելյանը ուղղակի գրում է քաղաքի ավագանու խնդրանքով՝ մուհթասիբին վճարվող հարկի վերացման մասին[36]։

XI—XIII դդ. Հայաստանի քաղաքների տիպաբանության ուսումնասիրության առումով խիստ կարևոր է այն հարցի պարզաբանումը, թե քաղաքային առևտրի կազմակերպմանը, չափի ու կշռի համակարգերի պահպանմանը ի՞նչ չափով էին վերահսկում քաղաքային ինքնավարության մարմինները։ Հայկական սկզբնաղբյուրներից չի երևում, որ քաղաքային ինքնավարությունը նշանակալի դեր էր խաղում ներքաղաքային կյանքի այս կարևոր բնագավառում։ Ինչպես Սիջին Ասիայում[37] և Իրանում[38], այնպես էլ Հայաստանում ու Վրաստանում մուհթասիբը հանդես չէր գալիս իբրև քաղաքային ինքնավարության ներկայացուցիչ, այլ նշանակվում էր կենտրոնական իշխանության, տեղական խոշոր ավատատերերի կամ քաղաքի կառավարիչների կողմից։ Հայաստանի քաղաքներում չի նկատվում նաև եկեղեցու և վանական հաստատությունների ներթափանցում քաղաքային առևտրի կազմակերպման ասպարեզ, որը նկատելի երևույթ էր Արևմտյան Եվրոպայի երկրներում ու Ռուսաստանում XII—XIII դդ.[39]։ Այս ուղղությամբ հայկական եկեղեցու հաջողություններին խոչընդոտում էին քաղաքական հարափոփոխ իրադրությունը, իշխանության գտնվելը օտարների ձեռքում, նաև այլազգիների առկայությունը հայկական քաղաքներում։ Հայկական իրականության մեջ առևտրի կազմակերպմանը ե-

---

32 Տե՛ս Г. А. Острогорский. К истории иммунитета в Византии.—Византийский временник. Т. XIII, М., 1958, с. 97—98; История Византии. Т. II, М., 1967, с. 161—163.

33 Տե՛ս Советы и рассказы Кекавмена, сочинение византийского полководца XI века. Подготовка текста, введение, перевод и комментарий Г. Г. Литаврина. М., 1972, с. 195—197, 640, прим. 566; Р. М. Бартикян. «Эникион» в Византии и столице армянских Багратидов Ани в эпоху византийского владычества (1045—1064 гг.).—Историко-филологический журнал, 1968, № 2, с. 127.

34 Տե՛ս Ս. Ավագյան. «Հակ» հարկային տերմինը վիմական արձանագրություններում.—Հայագիտական հետազոտություններ. հ. II, Երևան, 1974, էջ 51—59։

35 Տե՛ս Հ. Մանանդյան. Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, էջ 157։

36 Տե՛ս Բ. Առաքելյան. նշվ. աշխ., էջ 170։

37 Տե՛ս А. М. Беленицкий, И. Б. Бентович, О. Г. Большаков. Указ. соч., с. 331.

38 Տե՛ս Р. Моттахеде. Управление буидским Казвином.—Мусульманский мир. 950*1150. М., 1981, с. 58.

39 Տե՛ս Я. Н. Шапов. Из истории городского управления в Древней Руси (Служба мер и весов).—Города феодальной России. М., 1966, с. 99—104.

կեղեցականների մասնակցության վկայություն կարող է դիտվել, թերևս, Մարտիրոս Տեղերցի եպիսկոպոսի արձանագրությունը Անիում, որով արգելվում է կիրակնօրյա վաճառքը փողոցներում[40]։

Ինչպես երևում է Մխիթար Գոշի վկայություններից, շուկայական առևտրի կազմակերպումը թագավորական իշխանության մենաշնորհն էր (ռեգալիան)[41], իսկ եթե այն շնորհվում էր որևէ մեկին, ապա ենթադրելի է, թե արտոնություն ստացող ավատատերը պետք է օժտված լիներ վարչական-ոստիկանական ապարատով (մուհթասիբը այդ ապարատի կարևոր դեմքերից էր)՝ ձեռք բերած իրավունքը իրականացնելու համար[42]։ Այդպիսի զորեղ ավատատերերից էր, օրինակ, Խաչենի իշխան Հասան-Ջալալը, որը 1248 թ. Կեչառիսի վանքին է նվիրել «յամէն ամի ի համաւուէն վաճառէն ի ղուպատ»[43]։ Ուստի քաղաքային առևտրի կազմակերպման և համապատասխան եկամուտների ստացման մեջ տիրապետող դիրք էին խաղում աշխարհիկ իշխանությունները, հիմնականում քաղաքների սենյորները[44]։ Այս հանգամանքը զարգացած ավատատիրության ժամանակաշրջանի հայկական քաղաքների տիպաբանական բնութագրման մեջ պետք է կարևոր կետ համարել։

СЛУЖБА МУХТАСИБА В ГОРОДАХ АРМЕНИИ В XI—XIII вв.

А. Г. МАРГАРЯН

Резюме

Колоритная фигура мухтасиба в пестроте городской жизни мусульманского Востока выделялась разносторонностью обязанностей и широтой власти. Мухтасиб принимал самое деятельное участие в организации городской торговли, соблюдая точность весов и мер на базаре, следил за качеством работы ремесленников, контролировал выполнение установлений шариата и норм мусульманской морали, заботился о благоустройстве города. Поэтому особый интерес вызывает существование службы мухтасиба в совершенно иной этнокультурной среде—в бывшей столице ширакских Багратидов Ани в 1055—1156 гг., в эпоху владычества византийцев. Служба мухтасиба в Ани была лишена религиозной окраски и выполняла функцию организации городской торговли, а также контроля над работой ремесленных мастерских, мельниц и т. п. Определение сферы полномочий мухтасиба в городах Армении может способствовать выяснению вопросов генезиса и первичных функций этой службы. Будучи преемником византийского агаранома, мухтасиб лишь впоследствии превратился в типично мусульманскую фигуру. Подобная эволюция подтверждается любопытными свидетельствами «Спасет-намэ».

В типологической характеристике армянских городов эпохи развитого феодализма определенное место уделяется степени развитости городского самоуправления, ее роли в организации торговли. Анализ первоисточников показывает, что как в Средней Азии и Иране, так и в Армении мухтасиб не был представителем органов городского самоуправления, а назначался центральной властью или крупными местными феодалами. В городах Армении почти не замечается также экспансия церкви в область организации городской торговли, отчетливо прослеживаемая в Западной Европе и на Руси в XII—XIII вв. Организационные принципы торговли в городах Армении свидетельствуют о преобладающей роли сеньеров городов в этой важной области внутригородской жизни.

---

40 Տե՛ս Դիվան հայ վիմագրության, պր. 1, էջ 24։

41 Տե՛ս Մխիթար Գոշ. Դիրք դատաստանի, էջ 148, հմմտ. էջ 410։

42 Համանման իրավիճակի մասին ցոեթե նույն ժամանակաշրջանի Գերմանիայում տե՛ս Н. Ф. Колесницкий. Феодальное государство (VI—XV вв.). М., 1967, с. 130.

43 Տե՛ս Դ. Հովսեփյան. Խաղբակյանք կամ Պորչյանք հայոց պատմության մեջ. Անթիլիաս, 1969, էջ 317։

44 Պահպանվել է քաղաքային առևտրի կազմակերպման հետ կապված Անիի Շեդդադյան սենյոր Սուլթանի կարգադրություններից մեկը (տե՛ս Л. Т. Гюзалян. Надпись Кей-Султана Шеддади в Ани—Со. Академику Н. Я. Марру. М.—Л., 1935, с. 633)։